

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2022թ.

N ___ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

1. Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1) Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

2) Երևանի ենթակայության «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը,

3) Երևանի ենթակայության «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

4) Երևանի ենթակայության «Նորագավիթ պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

5) Երևանի ենթակայության «Նուբարարշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել սույն որոշման 1-ին կետի 1-ից 5-րդ ենթակետերում նշված փակ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը սահմանելու մասին» հ.1529-Ն որոշման հավելված 1-ով հաստատված պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելների համաձայն՝ Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա», «Արաբկիր մանկական պոլիկլինիկա», «Սարի Թաղ» պոլիկլինիկա», «Նորագավիթ պոլիկլինիկա» և «Նուբարաշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները /այսուհետ՝ պոլիկլինիկաներ/ հանդիսանում են փոքր՝ 10000-25000 բնակչություն սպասարկող պոլիկլինիկաներ, որոնք սպասարկում են՝

Աղյուսակ 1

ՀՀ	Միավորվող բուժհաստատություններ	Ընդամենը բնակչություն այդ թվում՝	18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց թիվ	Մինչև 18 տարեկան անձանց թիվ
1	«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	10921	9116	1805
2	«Սարի Թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	11957	9544	2413
3	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	11612	8585	3027
4	«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	16897		16897
5	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	12780	12780	
6	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	15330	15330	
7	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	12276	9996	2280

Երևանի ենթակայության «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ-ի /այսուհետ՝ դիսպանսեր/ կողմից մատուցվում են ներգատաբանական նեղ մասնագիտական ծառայություններ, այդ թվում՝ էնդոկրին հիվանդներին մասնագիտացված ախտորոշում, էնդոկրին հիվանդությունների վաղաժամ հայտնաբերում և կանխարգելում, ցերեկային ստացիոնարի կազմակերպում և ինսուլինի դոզաչափման կարգավորում: Դիսպանսերը գտնվում է ք. Երևան, Մամիկոնյան 29 հասցեյում, վարձակալական հիմունքներով զբաղեցնում է 124.3 քմ տարածք:

Սակայն ներգատաբանական նեղ մասնագիտական ծառայությունները, որպես բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ, հանդիսանում են պոլիկլինիկական բուժհաստատություններում ծավալվող պարտադիր դիսպանսերային կաբինետ, որտեղ մատուցվում են դիսպանսերի կողմից մատուցվող ծառայությունները, իսկ պոլիկլինիկական բուժհաստատություններում ծավալվող ցերեկային ստացիոնարում մատուցվում են էնդոկրին հիվանդներին անհրաժեշտ բուժօգնություն:

Երևանի ենթակայության վերոնշյալ պոլիկլինիկաներում առողջապահության նախարարության և բուժհաստատությունների միջև կնքված «Պետության կողմից

երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման» պայմանագրերի շրջանակներում ֆինանսավորումը չի բավարարում նույնիսկ բուժաշխատողների աշխատանքի դիմաց ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2019թ. հ.259-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող աշխատողների աշխատանքի վարձատրման» ուղեցույցի /այսուհետ՝ ուղեցույց/ համաձայն հաշվարկված վարձատրությունը իրականացնելուն, քանի որ արտահիվանդանոցային բուժհաստատությունների ընդամենը ծախսերի մեջ աշխատավարձի գծով ծախսերը կազմում են մեծ տեսակարար կշիռ: Մասնավորապես՝ միայն ուղեցույցի համաձայն հաշվարկված վարձատրությունը պետական պատվերից ստացված հաշվարկային եկամուտում կազմում է միջինում 83% (ըստ առանձին բուժհաստատությունների տատանվում է 68-117%), իսկ ընդամենը հաշվարկային աշխատավարձի գծով ծախսերի տեսակար կշիռը ընդհանուր հաշվարկային եկամտում կազմում է միջինում 90% (ըստ առանձին բուժհաստատությունների տատանվում է 76-98%):

Աղյուսակ 2

Կազմակերպության անվանում	Ընդամենը աշխատավարձի տեսակարար կշիռը ընդամենը հաշվարկային եկամուտներում	Միայն պետպատվերում միայն չափորոշյով սահմանված նորմերով հաշվարկված աշխատավարձի տեսակարար կշիռ	Ընդամենը աշխատավարձ և առաջնային ծախսերի տեսակարար կշիռը ընդամենը հաշվարկային եկամուտ
«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	98.5%	117.8%	103.6%
«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	92.5%	68.1%	98.5%
«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	87.9%	57.9%	92.2%
«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	90.6%	69.0%	94.3%
«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	75.8%	76.0%	81.8%
«Սարի Թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	87.8%	87.6%	95.4%
«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	92.8%	80.7%	94.7%

Բացի աշխատավարձի գծով ծախսերից՝ պոլիկլինիկաների կողմից կատարվում են նաև այլ ծախսեր, որոնց մեջ առաջնային են կոմունալ ծախսերը /հոսանք, ջուր, գազ, հեռախոսակապ ինտերնետ կապ/, բժշկական պարագաների և քիմիական /լաբորատոր/, ախտահանիչ նյութերի, ներպոլիկլինիկական դեղորայքի ձեռքբերման գծով ծախսերը:

Սակայն, բնականոն գործունեությունը ապահովելու համար, բուժհաստատությունների կողմից կատարվում են նաև այլ անհրաժեշտ և պարտադիր ծախսեր, ընդ որում՝ 2017 թվականի հետ համեմատ 2021 թվականի տարեկան արդյունքներով տեղի է ունեցել ծախսերի ավելացում՝ պայմանավորված պարտադիր հարկերի /գույքահարկ, հողի հարկ, աղբահանություն/, ինտերնետ կապի ծառայության և սպասարկման, էլեկտրոնային առողջապահական «Արմեդ» համակարգի վճարի գծով ծախսերի, նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, պայմանավորված ծախսերի,

ինչպես նաև էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրման արդյունքում՝ գրասենյակային ծախսերի ավելացմամբ /Աղյուսակ 3/:

Աղյուսակ 2

իրավաբանական անձի անվանումը	2017թ		2018թ		2019թ		2020թ		2021թ	
	Եկամուտներ	Ծախսեր	Եկամուտներ	Ծախսեր	Եկամուտներ	Ծախսեր	Եկամուտներ	Ծախսեր	Եկամուտներ	Ծախսեր
«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	109532.0	110897.2	112128.4	111800.5	129754.1	130544.3	123105.5	136585.7	250203.7	250644.4
«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	124186.0	127119.0	136966.3	133788.6	152333.8	152215.6	145502.4	152765.4	224131.0	222948.1
«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	93671.0	92721.3	106029.0	101070.7	136052.0	134763.0	119442.0	119582.0	189237.0	185166.0
«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	77903.0	77568.0	83075.0	82594.0	97648.0	93684.0	106056.0	102866.0	171428.0	170252.0
«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	87247.7	86924.8	89629.2	89587.9	106079.1	105959.5	113701.5	113527.3	127762.9	127704.4
«Սարի Թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	91657.0	91224.0	92225.0	90710.0	111490.0	107370.0	117798.0	117068.0	183979.0	183112.5
«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	169153.1	165382.1	169077.0	165825.0	204116.8	202726.2	218645.0	217876.7	317272.0	316691.4
«Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	48281.0	47693.0	80627.0	80469.0	93687.0	95202.0	44329.0	44302.0	42453.0	41621.0
ԸՆԴԱՄԵՆԸ	659678.8	659115.1	683100.9	674306.0	801421.8	792499.6	824808.4	840689.1	1274776.6	1271352.8

Դիսպանսերի կողմից ծառայությունները մատուցվում են և՛ պետական պատվերի շրջանակներում, և՛ վճարովի հիմունքներով: Սակայն՝ 2020 թվականին պետական պատվերի ծավալը գրեթե կրկնակի անգամ նվազեցվեց /աղյուսակ 3/, իսկ 2021 և 2022 թվականներին նվազման միտումը շարունակվեց՝ հասնելով միջինում 6.0 մլն դրամի և ընկերության ընթացիկ բնականոն գործունեությունը ապահովվում է վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներից: Սակայն շենքային պայմանների բացակայությունը հնարավորություն չի տալիս ընկերությանը ծավալվել և զարգանալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ նշված պոլիկլինիկաներում և դիսպանսերում հաշվետու տարվա գործունեության արդյունքներով առաջանում են ֆինանսական դժվարություններ, դրամական միջոցների ճեղքվածք, արդյունքում՝ կուտակվում են կրեդիտորական պարտքեր, չի ապահովվում ինքնաձախսաձածկում, կամ ֆինասական միջոցները բավարարում են միայն ընթացիկ բնականոն գործունեության ապահովման համար նվազագույն անհրաժեշտ ծախսերի կատարմանը՝ զրկելով կազմակերպությանը զարգացման հնարավորությունից:

Պոլիկլինիկաների կողմից ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթը /վնասը/ ներկայացված է աղյուսակ 4-ում:

Ուղեցույցի հավելված 4-ով սահմանվում է բժիշկների և միջին բուժանձնակազմի կողմից սպասարկման տարածքի օպտիմալ բնակչության թվաքանակը և վարձատրման ամսեկան հաշվարկային նվազագույն դրույքաչափերը, ընդ որում՝ մեկ դրույք աշխատավարձի համար որպես սպասարկող բնակչության թվաքանակ ընդունվում է սպասարկվող բնակչության օպտիմալ թվաքանակը:

իրավաբանական անձի անվանումը	Չուտ շահույթ /վնաս/				
	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	(1365.2)	327.9	(790.2)	(13480.2)	(440.7)
«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	(2933.0)	3177.7	118.2	(7263.0)	1182.9
«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	949.7	4958.3	1289.0	(140.0)	4071.0
«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	335.0	481.0	3964.0	3190.0	1176.0
«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	322.9	41.3	119.6	174.2	58.5
«Սարի Թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	433.0	1515.0	4120.0	730.0	866.5
«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	3771.0	3252.0	1390.6	768.3	580.6
«Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	588.0	158.0	(1515.0)	27.0	832.0
ԸՆԴԱՄԵՆԸ	563.7	8794.9	8922.2	(15880.7)	3423.8

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ փոքր պոլիկլինիկաները, նեղ մասնագիտական կաբինետների բժշկների և միջին բուժանձնակազմի դրույքները և աշխատաժամանակը սահմանում են՝ ելնելով ազգաբնակչության թվաքանակից, արդյունքում՝ նեղ մասնագիտական կաբինետի բժշկների և միջին բուժանձնակազմի դրույքները ստացվում են 0.25 դրույքից մինչև առավելագույնը 0.75 դրույք, որին համապատասխանող աշխատաժամանակի պայմաններում նեղ մասնագիտական կաբինետներում գոյանում են հերթեր, ինչն էլ առաջացնում է հիվանդների արդարացի դժգոհությունը: Որոշ դեպքերում էլ նեղ մասնագիտական կաբինետները գործում են շաբաթը 1 կամ 2 օր, կամ ընդհանրապես կաբինետները չեն գործում՝ համապատասխան մասնագետ չլինելու պատճառով, ինչը առաջնահերթ պայմանավորված է աշխատավարձի մեծությամբ: Մասնավորապես՝ նշված պոլիկլինիկաներում մինչև 18 տարեկան բնակչություն սպասարկող նեղ մասնագիտական կաբինետի բժշկի միջին աշխատավարձը կազմում է 78.7 հազար դրամ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 40.2 հազար դրամ, 18 տարեկան և ավելի բնակչություն սպասարկող նեղ մասնագիտական կաբինետի բժշկի միջին աշխատավարձը կազմում է 86.7 հազար դրամ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 44.3 հազար դրամ: Դիսպանսերային բուժօգնության կաբինետի բժշկի միջին աշխատավարձը կազմում է 75.0 հազար դրամ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 38.0 հազար դրամ /ըստ առանձին բուժհաստատությունների ներկայացված է Աղյուսակ 5-ում: Վերոգրյալի արդյունքում՝ պացիենտները ուղեգրվում են այլ պոլիկլինիկաներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է բնակչության արտահոսքի, քանի որ պացիենտը գերադասում է 1 տեղում ստանալ ծառայությունները ամբողջ ծավալով:

Աղյուսակ 5

2. Մասնագիտացված բուժօգնություն, այդ թվում	Մասնագետ	Կցագրված 1 բնակչի հաշվով	Բնակչության թիվ						Միջին աշխատավարձ
			9116	9544	8585	12780	15332	9996	
1. 18 և բարձր տարիքի անձանց համար	Բժիշկ	7.83	71,378	74,730	67,221	100,067	120,050	78,269	85,286
	Բուժքույր	4	36,464	38,176	34,340	51,120	61,328	39,984	43,569
			1805	2413	3027	16897	2280		
2. Մինչև 18 տարեկան երեխաների համար	Բժիշկ	13.05	23,555	31,490	39,502	220,506	29,754		68,961
	Բուժքույր	6.67	12,039	16,095	20,190	112,703	15,208		35,247
3. Դիսպանսերային բուժօգնություն	Կցագրված 1 բնակչի հաշվով	Բնակչության թիվ /մեծահասակ և մանկական/							Միջին աշխատավարձ
Բնակչության թիվ		10921	11957	11612	16897	12780	15330	12276	
		Բժիշկ							
-հակատուբերկուլյոզային, այդ թվում	8.039	87,794	96,122	93,349	135,835	102,738	123,238	98,687	105,395
-հոգեբուժական	5.554	60,655	66,409	64,493	93,846	70,980	85,143	68,181	72,815
-ուռուցքաբանական	4.272	46,655	51,080	49,606	72,184	54,596	65,490	52,443	56,008
-արյունաբանական	4.272	46,655	51,080	49,606	72,184	54,596	65,490	52,443	56,008
-ներզատաբանական	7.833	85,544	93,659	90,957	132,354	100,106	120,080	96,158	102,694
-մաշկավեներաբանական	5.554	60,655	66,409	64,493	93,846	70,980	85,143	68,181	72,815
-ինֆեկցիոն	4.275	46,687	51,116	49,641	72,235	54,635	65,536	52,480	56,047
		Միջին բուժանձնակազմ							
-հակատուբերկուլյոզային, այդ թվում	4.105	44,831	49,083	47,667	69,362	52,462	62,930	50,393	53,818
-հոգեբուժական	2.836	30,972	33,910	32,932	47,920	36,244	43,476	34,815	37,181
-ուռուցքաբանական	2.182	23,830	26,090	25,337	36,869	27,886	33,450	26,786	28,607
-արյունաբանական	2.182	23,830	26,090	25,337	36,869	27,886	33,450	26,786	28,607
-ներզատաբանական	4	43,684	47,828	46,448	67,588	51,120	61,320	49,104	52,442
-մաշկավեներաբանական	2.836	30,972	33,910	32,932	47,920	36,244	43,476	34,815	37,181
-ինֆեկցիոն	2.182	23,830	26,090	25,337	36,869	27,886	33,450	26,786	28,607

Այս պայմաններում ակնհայտ է դառնում, որ պոլիկլինիկաները չունեն համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի բժշկական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի՝ անհրաժեշտ է վերջիններս վերակազմակերպել՝ այլ բուժհաստատության հետ միացման ճանապարհով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն, «Թիվ 13 պոլիկլինիկա», «Թիվ 17 պոլիկլինիկա», «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների կադրային ներուժը, ֆինանսատնտեսական վիճակը, տեխնիկական հագեցվածությունը՝ նապատակահարմար է համարվել.

1. Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով Երևանի ենթակայության «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը, ընդ որում՝ նախատեսվում է «Թիվ 1 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունները մեկտեղել ք. Երևան Մոսկովյան 13 հասցեում, իսկ «Թիվ 5 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը շարունակել

նույն հասցեում՝ որպես «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղ:

Միաժամանակ՝ «Մխիթար Հերացու անվան» ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի «Հերացի» պոլիկլինիկայի գործունեության դադարեցման կապակցությամբ՝ բանակացություններ են տարվում՝ վերջինիս կողմից սպասարկվող 13878 ազգաբնակչությանը (այդ թվում՝ մինչև 18 տարեկան 6883 անձ, 18 տարեկան և բարձր 6995 անձ) «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ում հաշվառելու ուղղությամբ: Վերոնշյալ վերակազմակերպման արդյունքում Կենտրոն համայնքում կձևավորվի մոտ 54000 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի մեծ պոլիկլինիկա՝ էնդոկրին դիսպանսեր ծառայությունով, որը հնարավորություն կտա մեկ տեղում ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող բոլոր արտահիվանդանոցային ծառայությունները ամբողջ ընտանիքի համար:

2. Երևանի ենթակայության «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը: Վերակազմակերպման արդյունքում կստեղծվի ավելի քան 66000 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի մեծ պոլիկլինիկա: «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը շարունակվելու է որպես մասնաճյուղ:

3. Երևանի ենթակայության «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը: Վերակազմակերպման արդյունքում կստեղծվի ավելի քան 54000 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի մեծ պոլիկլինիկա: «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը շարունակվելու է որպես մասնաճյուղ:

4. Երևանի ենթակայության «Նորագավիթ պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը: Վերակազմակերպման արդյունքում կստեղծվի ավելի քան 44000 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի միջին պոլիկլինիկա: «Նորագավիթ պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը շարունակվելու է որպես մասնաճյուղ:

5. Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Նուբարարշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը: Վերակազմակերպման արդյունքում կստեղծվի ավելի քան 38000 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի միջին պոլիկլինիկա: «Նուբարարշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը շարունակվելու է որպես մասնաճյուղ:

Վերակազմակերպման արդյունքում հնարավոր կլինի նաև նվազեցնել աշխատավարձի գծով ծախսերը՝ վարչատնտեսական անձնակազմի հաստիքների օպտիմալացման միջոցով, որն էլ հնարավորություն կստեղծվի աշխատակիցներին վճարել կատարված աշխատանքին համարժեք աշխատավարձ: Մասնավորապես՝ փոքր պոլիկլինիկաներում տնօրենի աշխատավարձը կազմում է միջինում 230.0-370.0 հազար դրամ՝ կախված ընկերության ֆինանսական վիճակից իսկ վարչատնտեսական

անձնակազմի /համակարգչային օպերատոր, կրտսեր բուժանձնակազմ, տնտեսական այլ անձնակազմ/ աշխատավարձը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափով՝ չնայած կատարվող աշխատանքների ծավալներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱՋՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ